

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԼՈՏՈՆ»

Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը՝ մի գեղեցիկ «խաղալիք» է հրատարակել հայ երեխայի համար—լոտո, պատկերներով, պատկերներն էլ չորս լեզվով բացատրած: Այս ամենաօգտակար և շքեղ խաղալիքն է, որ տեսնում են մեր երեխաները: Բացի նրանից, որ փոքրիկները հանգիստ կնստեն և կգրադվեն այդ խաղալիքով, հանգստություն տալով և տանըցիներին, նրանք կսովորեն շատ բառեր և առարկաների անուններ, այլև նրանց թարգմանություններն ուրիշ լեզուներով, որ ընկերության նպատակն է եղել այս լոտոն հրատարակելով:

Բայց, չենք կարող չնկատել, որ առարկաների անունները և բառերի թարգմանությունները ճիշտ չեն: Օրինակ, երեխաները ճոճվում են, փոխանակ՝ ճլորթի են ընկնում (պատկերն այդպես է). գերան և մանգաղ—գերանդի և մանգաղ, ապրանքի վագոն—ապրանքատար վագոն. կատվիկները խաղում են—կատվի ձագերը խաղում են, փքոց—փուքս: Նկարել են թակ, գրել են՝ կռան (молот), ձիու շրջակապ—хомут для лошади, կամար—дуга (կարելի էր կլկալ ասել, ինչպես ասում են գոմշի կլկալ, կովի կլկալ, կլիներ և ձիու կլկալ): Գրում են դույլ—ушат, կանաչ դույլ—зеленое ведро, ջրի աման—графин, փայտյա ջրաման—шайка, պահարան—комод, փայտյա պահարան—деревянный шкаф, կառք—каreta, ուղեկառք—каляска և այլն:

Այո՛, օգտակար խաղալիք է պատկերներով լոտոն, այն էլ չորս լեզվով պատկերները բացատրած, բայց նա նպատակին չէ հասնում՝ սխալ թարգմանություններ ու շինծու բառեր սովորեցնելով երեխային: Պետք է հուսալ, որ ընկերությունը նույն խաղալիքի երկրորդ հրատարակությունն անելիս՝ ավելի զգույշ կլինի այդ կողմից, և մանավանդ ցանկալի էր, որ պատկերները լինեին և մեր գյուղական կյանքից կամ հենց մի լոտո դրան լիներ նվիրած: